

Ո՛Վ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ ՍՓԻՒՌԸ

Posted on January 2, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ Մինաս Գոճայեան, ՌԱԿ Մամուլ, Լոս Անճելըս, 30 Յունուար 2010

✘ Առաջին անգամը չէ որ այս հարցը կը ծագի: Նախահամաձայնութիւններու առթիւ բարձրացած մտահոգութիւնները անգամ մը եւս մտածել տուին սփիւռքեան ներկայացուցչական կազմի մը մասին: Կազմ ըսելով հասկնանք մարմին մը, մշտական յանձնաժողով մը, քննկրես մը եւայլն:

Ճիշդ է որ սփիւռքը միատարր չէ եւ սփիւռքահայը իր բնակութիւն հաստատած երկրին քաղաքացին ըլլալով ունի իր պարտաւորութիւններն ու յանձնառութիւնները. նաեւ սահմանափակումները, սակայն երբ համայն հայութիւնն ու այս պարագային սփիւռքը յուզող կենսական հարց մը կայ՝ բոլոր կաշկանդումները կը դառնան երկրորդական: Սա այն պարագան է, երբ հայ սփիւռքի գոյութիւնը վտանգի կ'ենթարկուի եւ կամ աւելի շուտ իր ինքնութիւնը կորսնցնելու սպառնալիքին տակ կը գտնուի:

Դոկտ Մինաս Գոճայեան, ՌԱԿ Մամուլ, Լոս Անճելըս, 30 Յունուար 2010

✘ Առաջին անգամը չէ որ այս հարցը կը ծագի: Նախահամաձայնութիւններու առթիւ բարձրացած մտահոգութիւնները անգամ մը եւս մտածել տուին սփիւռքեան ներկայացուցչական կազմի մը մասին: Կազմ ըսելով հասկնանք մարմին մը, մշտական յանձնաժողով մը, քննկրես մը եւայլն:

Ճիշդ է որ սփիւռքը միատարր չէ եւ սփիւռքահայը իր բնակութիւն հաստատած երկրին քաղաքացին ըլլալով ունի իր պարտաւորութիւններն ու յանձնառութիւնները. նաեւ սահմանափակումները, սակայն երբ համայն հայութիւնն ու այս պարագային սփիւռքը յուզող կենսական հարց մը կայ՝ բոլոր կաշկանդումները կը դառնան երկրորդական: Սա այն պարագան է, երբ հայ սփիւռքի գոյութիւնը վտանգի կ'ենթարկուի եւ կամ աւելի շուտ իր ինքնութիւնը կորսնցնելու սպառնալիքին տակ կը գտնուի:

Հայաստանի Հանրապետութիւնը նոյնպէս ունի իր կաշկանդումները եւ իր սահմանափակումները, հետեւաբար սփիւռքի զանազան դժուարութիւններու եւ ճգնաժամերու լուծումները Հայաստանէն սպասելը անհրատեսական է: Կը նմանինք մարդկային մարմնին, ուր մեր անդամները մարմնի անբաժան մասերն են, բայց մէկը միւսին դերը չի կրնար կատարել: Այս հանգրուանին է որ խիստ անհրաժեշտութիւն կը դառնայ համագործակցութիւնը, աշխատանքի եւ պատասխանատուութիւններու բաժանումն ու փոխ լրացումը: Այս աշխատանքն ու ռազմավարութիւնը չ'ենթադրեր կուրաբար հետեւիլ մէկը միւսին, ալ՝ աշխատանքի եւ պատասխանատուութեան համաձայնեցում: Այլ խօսքով՝ Հայաստանը իր պետութեան ու ժողովուրդին անմիջական շահերէն մեկնած իր օրակարգը պիտի գործադրէ, սփիւռքը՝ իրը:

Եթէ հայրենիքին պարագային պետութիւնն ու կառավարութիւնը կրողներն են հանրապետութեան գործընթացին, աճումին ու ազգային ապահովութեան, սփիւռքի մէջ որո՞նք են, կամ ո՞վ է այն ներկայացուցչական գերագոյն մարմինը, որ պիտի խօսի սփիւռքի անունէն հայրենիքի ու միջազգային հանրութեան կառոյցներու հետ: Յարդ չունինք այդ գերագոյն մարմինը կամ փորձած ենք ու տակաւին կամ չենք յաջողած եւ կա՛մ պահը չէ հասունցած:

Սխալ չմեկնաբանուելու համար ըսենք թէ չենք ուզեր հաւասարութեան նշան դնել սփիւռքի ու Հայաստանի գերագոյն մարմիններուն միջեւ ոչ ալ բանաձեւել այլապէս՝ սփիւռք ընդ հայրենիք:

Նախահամաձայնութիւններու նախօրէին ու յաջորդող օրերուն հացի ու ջուրի պէս անհրաժեշտութիւնը զգացուեցաւ վերոյիշեալ գերագոյն մարմին, սակայն այս պարագային տարբեր բանաձեւ ու մեքանիզմ մը ի յայտ եկաւ:

Սփիւռքի մեծամասնութիւնը կը գտնուէր նախահամաձայնութիւններու ստորագրման կապակցութեամբ մերժողական դիրքերու վրայ՝ որքան ալ համաձայն կողմը եւ Հայաստանի իշխող վերնախաւը փորձէր ցոյց տալ թէ իբր հակառակն է:

Դեռ անելին, սփիւռքի կարգ մը կազմակերպութիւններու մէջ իսկ կային կողմ եւ դէմ շերտեր: Ուրեմն կը պարզուի թէ տակաւին սփիւռքի մէջ չկայ այն վերին մարմինը, որ իբրեւ գերագոյն մարմին արտայայտուի եւ պարզէ մեծամասնութեան ընթրնումն ու շահերը:

Հարցախոյզները ցոյց կու տան թէ սփիւռքահայութիւնը ներկայացնող մարմինը (քոնկրետը), վերին գերատեսչութիւնը քաղաքական կուսակցութիւնները պէտք չէ ըլլան (ասիկա քննարկելիք այլ խնդիր մըն է), եկեղեցին – իր զոյգ վերապետութիւններով Նոյնապէս, առանձինն, չի կրնար ներկայացնել սփիւռքի հիմնախնդիրները եւ Հայ Դատի հետապնդումը: Անկախ հարցախոյզները 73 տոկոսով կը պաշտպանեն անկախ գերատեսչութեան մը անհրաժեշտութիւնը: Նշուած հարցախոյցները ոչ թէ անատակ կամ ժամանակավրէպ կը նկատեն քաղաքական ու եկեղեցական հաստատութիւնները, այլ գործնականապէս անհեռանկար կը նկատեն՝ մրցակցութեան ու զանազան շահերը ունենալու պատճառաւ:

Ժամանակն է որ քաղաքական կուսակցութիւնները եւ եկեղեցական հաստատութիւնները, բարեսիրական ու հայրենակցական միութիւնները անգամ մը եւս իրարու քով գան ու առանց շարժելու կուսակցական նեղ շահերու մղումներով ու թելադրութիւններով՝ նախաձեռնողը ըլլան գերագոյն մարմնի մը ստեղծման, մարմին մը, որ զինուի այնպիսի կանոնադրութեամբ մը, որ անհնարին դարձնէ որեւէ քաղաքական կողմի/կուսակցութեան մենատիրութեան հաստատումը:

Դժուար նախաձեռնութիւն մըն է, բայց ոչ անիրագործելի: Հարկաւոր է թօթափել «կա՛մ մեր ուղիով կամ մոռցէք մեզ» (Either our way or no way) մտայնութիւնը:

